

---

---

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ  
(1946–1948 թթ.)

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*XX դարում իրականացած հայոց ներգաղթի երրորդ փուլն ընդգրկում է 1946–1948 թվականները<sup>1</sup>, որի ընթացքում աշխարհի շուրջ տասնհինգ երկրներից մոտ 90 հազար մարդ<sup>2</sup> ներգաղթեց Խորհրդային Հայաստան: Թե՛ ընդգրկման ծավալով և թե՛ մարդկանց թվաքանակով նախորդ ու հաջորդ փուլերի համեմատությամբ սա ամենամեծ ներգաղթն էր, որը խորհրդահայ պատմագրության մեջ մտավ «Մեծ հայրենադարձություն» անունով:*

*Այսօր, երբ անկախ Հայաստանն իր դռներն է բացել Սփյուռքի առջև ու տարերային ներգաղթ է սկսվել, առավել քան երբևէ կարևոր է անաչառ հայացքով անդրադառնալ հայրենադարձության պատմությանն ու նախորդ փորձին՝ հնարավորինս խուսափելու համար սխալներից և առաջնորդվելով եկող սերնդի առջև ունեցած պատասխանատվության զգացումով:*

*Հարկ է նշել, որ դարեր շարունակ գաղթ ու տեղահանություն ապրած հայ ժողովրդի պատմության մեջ մեծ կարևորություն ունեցող նշանակալից այս իրադարձությունն ամբողջապես ուսումնասիրված չէ և շատ հարցեր դեռևս կարոտ են լուսաբանման: Մինչդեռ այս ներգաղթը ցեղասպանությունից հետո Սփյուռքը ձևավորած և առաջին սերունդը տված հայության մի մասի տունդարձն էր, դարեր ի վեր տարանջատված հայ ժողովրդի երկու հատվածների մեկտեղումը պատմական հայրենիքից մնացած փոքրիկ հողակտորի վրա:*

*1946–1948 թթ. ներգաղթը, անշուշտ, ուներ իր քաղաքական նախադրյալները, որոնց համառոտակի կուզենայինք անդրադառնալ:*

*Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Սովետական Միությունը հաղթանակով դուրս եկավ ֆաշիզմի դեմ մղվող պայքարում, երկրի միջազգային վարկանիշը հասավ իր բարձրակետին: Պատերազմի վերջերքը մոռանալ էին տվել 1937 թ. բռնաճշումները, որոնց զոհ էին գնացել և 1920–1930-ականներին ներգաղթածներից շատերը: Ժողովուրդը վայելում էր հաղթանակի բերկրանքը:*

*1945 թ. նոյեմբերին սովետական կառավարությունը հայրենիք վերադառնալու հրավերի կոչ հղեց պատերազմի տարիներին տարբեր պարագաներում արտասահ-*

---

<sup>1</sup> Առաջին փուլն ընդգրկում էր 1921–1926 թթ., երկրորդը՝ 1931–1933 և 1936 թթ.:

<sup>2</sup> Ձանգվածային ներգաղթի հետևանքով Հայաստան է եկել 89.750 մարդ (տե՛ս Հ. Մ Է լ ի ք - ս է թ յ ա ն. Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 274): Այդ տարիներին ներգաղթել են և անհատական թույլտվությամբ՝ փոքր խմբերով:

մանում հայտնված սովետական քաղաքացիներին (միաժամանակ նրանց ներում շնորհելով), ինչպես նաև 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո արտասահմանում ձևավորված «սպիտակ էմիգրացիային», ինչին, ի դեպ, վերջինս գրեթե չարձագանքեց:

Օգտվելով առիթից, Սովետական Հայաստանի ղեկավարությունը նպատակահարմար գտավ վերսկսել պատերազմից առաջ ընդհատված հայրենադարձությունը՝ այդ հարցով միջնորդելով Սովետական Միության կառավարության առջև: Պատերազմի տարիներին Հայաստանը մարդկային մեծ կորուստներ էր ունեցել, և բնակչությունը նվազել էր մեկ միլիոնից, որը Հայաստանի կարգավիճակի փոփոխությամբ էր սպասոնում: Ներգաղթը լուծելու էր նաև ժողովրդագրական այս խնդիրը: Սովետական կառավարությունը որոշում կայացրեց թույլատրել արտասահմանում բնակվող և Սովետական Հայաստան ներգաղթել ցանկացող հայերի վերադարձը<sup>3</sup>: Մինչ այդ հայտարարությունը, Սովետական Միությունը, օգտվելով 1925 թ. դեկտեմբերի 17-ի սովետա-թուրքական պայմանագրի ժամկետը լրանալու առիթից, տարածքային պահանջներ էր ներկայացրել Թուրքիային՝ դրանք դիտելով որպես հաշտության պայմանագրի նախապայման<sup>4</sup>:

Դեռևս մինչև երկրորդ աշխարհամարտը, Ստալինը, վերագնահատելով սովետական իշխանության արշալույսին (1921 թ.) Թուրքիային զիջած հայկական տարածքների ռազմավարական նշանակությանը, մտածում էր վերադարձնել դրանք: Այդ ծրագրում զգալի դեր էր վերապահված Միյուռքին: Այդ է վկայում այն փաստը, որ սիյուռքահայերի դիմումներն՝ ուղղված ՍՍՀՄ կառավարությանը, օգտագործվեցին Թուրքիային ներկայացված տարածքային պահանջների հիմնավորման համար:

Այդ լուրը, թևածելով աշխարհով մեկ, ալեկոծեց համայն Միյուռքը: Բարձրացավ հայրենասիրական մի հզոր ալիք «Դեպի Հայաստան» կարգախոսով, որը հրատապ դարձրեց ներգաղթի հարցը<sup>5</sup>:

Հայաստանի կառավարությունը, պահը նպատակահարմար դիտելով, կենտրոնական իշխանության առջև հարց բարձրացրեց Ղարաբաղն ու Նախիջևանը վերադարձնելու մասին<sup>6</sup>, որտեղ կարելի էր բնակեցնել ներգաղթած հայերին, քանի որ Հա-

<sup>3</sup> Սովետական Միության կառավարության պաշտոնական հայտարարությունը վերատպվեց տեղական թերթերում. տե՛ս «Սովետական Հայաստան», 14. XII. 1945:

<sup>4</sup> Советский Союз на международных конференциях периода Великой отечественной войны (1941–1945 гг.). Сборник документов, т. 6. М., 1980, с. 314–321; «Էջմիածին», 1946, թիվ 1-5, էջ 5-8:

<sup>5</sup> Տեղին է նշել, որ արևմտահայկական հողերը վերադարձնելու խոստումները դեր չէին խաղում իրանահայերի ներգաղթի դեպքում, քանի որ Արևմտյան Հայաստանը նրանց բնօրրանը չէր (բացառությամբ ժամանակին Պարսկաստան գաղթած արևմտահայ փոքրաթիվ խմբերի): Իրանահայերին Սովետական Հայաստան էր բերում հայրենասիրական այն հուժկու պոռթկումը, որ առաջացել էր Միյուռքում: Մյուս հանգամանքն այն էր, որ ծագումով արևելահայ պարսկահայերը գոյություն ունեցող հայկական պետականության տարածքն էին համարում իրենց բուն հայրենիքը, որտեղից բռնագաղթել են Շահ Արափի և հետագա ժամանակաշրջաններում:

<sup>6</sup> Հարցը քննարկման առաջարկվեց Ադրբեջանի կառավարությանը, որը տարածքի փոխանակման առաջարկ էր անում (Ղարաբաղն ու Նախիջևանը՝ Վերո, Մասիսի, Կրասնոսելսկի շրջանների

յաստանի առկա տարածքը քիչ հնարավորություն էր տալիս: Դրա իրական հնարավորությունն ու հիմնավորումը կար, բայց դա չարվեց: Մինչդեռ՝ Սփյուռքը շարունակում էր ալեկոծվել արևմտահայկական հողերի պահանջատիրության խնդրով:

Ներգաղթի վերաբերյալ Սովետական Միության որոշման հրապարակումից հետո սկսվեց ներգաղթի նախապատրաստական փուլը և ողջ թափով գործի դրվեց սովետական քարոզչամեթոդները: Այդ գործին լծված էին ինչպես Սփյուռքի հասարակական կազմակերպությունները, այնպես էլ սովետահայ մտավորականության ներկայացուցիչները (Հր. Աճառյան, Մ. Մարյան, Դ. Դեմիրճյան, Ավ. Բասահյան և ուրիշներ), նաև հատուկ նախապատրաստված ազդիտատրոններ: Սփյուռքում տարվող սովետական քարոզչությունն ուղղված էր այն կարծիքների դեմ, թե դեռևս վաղաժամ է ներգաղթ կազմակերպել: Այսպես՝ դաշնակցականները գտնում էին, որ Հայաստանի սահմանները խիստ նեղ են, և պետք է սպասել հողերի հարցի լուծմանը, ապա նոր սկսել ներգաղթը<sup>7</sup>:

Ներգաղթին դեմ էր նաև Միջին և Մերձավոր Արևելքի կաթոլիկ եկեղեցիների առաջնորդ կարդինալ Գ.–Պ. Աղաջանյանը: Նա իր դիրքորոշումը հիմնավորում էր այն փաստարկով, որ Հայաստանում առհասարակ անհանդուրժող վերաբերմունք կա կրոնի, եկեղեցու հանդեպ, այն դեպքում, երբ դարավոր օտար բռնապետության ժամանակ իսկ հայ եկեղեցու իրավունքները հարգվում էին: «Ուրեմն մեզի կը պարտադրվի պանդխտության մեջ մնալ,– նշում է կարդինալը,– որպեսզի անաղարտ պահենք կաթոլիկե եկեղեցին ու հավատքը»<sup>8</sup>: Կարդինալի այս դատողություններն ընդունվեցին իբրև գրպարտություն ու թշնամական վերաբերմունք հայրենիքի հանդեպ:

Սփյուռքի մամուլում տպագրվում էին նյութեր Հայաստանում ծավալվող բնակարանաշինության, մթերքի գների իջեցման մասին<sup>9</sup>, հիմնարկ-ձեռնարկությունների և մտավորականության կոչերն ու ուղերձները՝ «Հայրենիքը սպասում է ձեզ»: Կազմակերպվում էին «Ճանչնանք հայրենիքը» թեմայով դասախոսությունների շարքեր, որոնք ուղեկցվում էին ֆիլմերի, գրքերի, ալբոմների և այլ նյութերի ցուցադրումով, որտեղ Հայաստանը ներկայացվում էր որպես ծաղկող ու բարգավաճող, ամեն բարիքով լեցուն երկիր, ինչը, անշուշտ, չէր համապատասխանում իրականությանը: Հիրավի, դժվար է մեղադրել մարդկանց, որոնք առ այսօր պնդում են, թե իրենց «խաբեւոյ վերեցին»:

Բայց կային և ոչ քչերը, որոնք առավել սթափ էին նայում իրավիճակին, գիտակցելով, որ հետպատերազմյան շրջանում երկիրը կարող էր ունենալ բազմաթիվ չլուծված խնդիրներ, և իրենց որոշակի դժվարություններ էին սպասում: Այսպես մտածողները հայրենիք էին գնում՝ իրենց աշխատանքով հայրենիքի վերաշինմանը նպաս-

փոխարեն), ինչն անընդունելի համարվեց (տե՛ս՝ Ա. Ք ո չ ի ն յ ա ն. Հայրենիքը փշալարի մեջ.– «Գառուն», 1989, № 3, էջ 47-56):

<sup>7</sup> Տե՛ս «Ասպարեզ» (Ֆրեզնո), 12. II. 1947:

<sup>8</sup> Տե՛ս Գ. Մ վ ա զ լ յ ա ն. Հայրենիքիս համար, Երևան, 1968, էջ 87-89:

<sup>9</sup> Տե՛ս Ա. Գ. և ո ռ զ յ ա ն. Էջեր հայրենադարձության պատմությունից.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 2, էջ 119-125:

տեղու պատրաստակամությամբ: Նրանք իրենց հետ տանում էին ոչ միայն անձնական իրեր, այլ նաև աշխատանքային-մասնագիտական գործիքներ, սարքեր, հաստոցներ ու մեքենաներ, արտադրական հումք, մշակութային արժեքներ:

Չնայած ներգաղթին կողմ և դեմ կարծիքներին՝ մարդիկ հազարներով ցուցակագրվում էին Սփյուռքի բոլոր համայնքներում արագ կազմավորված ներգաղթ կոմիտեներում՝ անքուն գիշերներ անցկացնելով հերթերում, շտապելով օր առաջ Հայաստան գնալ: Ինչպես բնորոշում էին ներգաղթողները՝ «Խենթություն եկած էր վրանիս, ամենս ալ ներգաղթով հիվանդացած էինք: Օրվան խոսակցության նյութը այն էր, թե ով արձանագրվեցավ և ով չհաջողեցավ: Այդ օրերուն ներգաղթին դեմ խոսողը ազգի դավաճան կնկատվեր»<sup>10</sup>: Եվ այսպես սկսվում է ներգաղթը:

Հայրենադարձների առաջին ծանոթությունը սովետական երկրի հետ տեղի ունեցավ ընդունման կայաններում (Բաթում, Բաքու, Ջուլֆա)<sup>11</sup>, երբ նորեկները դեմ առ դեմ բախվեցին դառն իրականությանը՝ տեսնելով սև հացը կշեռքին, այն դեպքում, երբ իրենց ստիպում էին հետները վերցրած սննդամթերքը ջուրը նետել՝ ասելով, թե տեղ հասնելուն պես ամեն ինչ կունենան: Տեղացիները մոտենում ու հարցնում էին, թե ինչո՞ւ եք եկել, մի թե իրենց ապրած երկրներում ավելի վատ էր վիճակը: Տեսածը և լսածը սառը ցնցուղի ազդեցություն է ունենում, մարդիկ հասկանում են, որ խաբված են, սակայն հետդարձի ճանապարհն արդեն փակ էր: Ականատես ներգաղթողը պատմում էր, որ դեռևս նավի վրա, քարավանապետերին կանչում էին և պահանջում այն մարդկանց ցուցակը, որոնք ծառայել են տվյալ երկրի բանակում<sup>12</sup>:

Երբ բեռնատար վագոններով նորեկներին տեղափոխում էին Հայաստան, մարդիկ դեռ հույս ունեին, որ իրենց այլ պայմաններ են սպասում հայրենիքում: Սակայն տեղ հասնելուն պես, հասկացան, որ Հայաստանում վիճակն ավելի լավ չէ: Տեղացիների հագուստը, խանութների դատարկությունը, մթերքի կտրոնները, հացի հերթերը ի չիք դարձրին ծաղկող հայրենիքի միջք: Տեղաբաշխման սխալ քաղաքականության հետևանքով էլ ավելի խորացավ հուսահատությունը: Տեղաբաշխելիս հաճախ քաղաքաբնակներին ուղարկում էին գյուղական վայրեր ու թողնում անօգնական՝ միայնակ կիսավեր տներում: Լինում էր և հակառակը, երբ գյուղաբնակ հողագործներին տեղավորում էին քաղաքներում, որտեղ նրանք անելիք չունեին: Սա ներքին տեղափոխությունների ու դժգոհությունների տեղիք էր տալիս:

Նորեկ հայրենադարձներին բնակարանով ու աշխատանքով ապահովելը մասամբ տեղի էր ունենում ոչ պակաս կարիքավոր տեղացիների հաշվին, ինչն իր հերթին դժգոհություններ էր առաջացնում վերջիններիս մեջ, և սրում էին եկվոր-տեղացի փոխադարձ հարաբերությունները: Եկվորները պահանջում էին իրենց խոստացվածը և չստանալով՝ դժգոհում, իսկ տեղացիներն էլ բողոքում էին նորեկների ներկայությունից, քանի որ եղածն իրենց էլ չէր բավարարում: Ներգաղթածների համար

<sup>10</sup> Ա. Ս տ ե փ ա ն յ ա ն. Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Երևան, 1971, բանասաց՝ ռուսիսահայ Սիրարիի Հակոբյան (ներգաղթած 1946 թ.):

<sup>11</sup> Բաթումը համարվում էր Հայաստանի հյուսիսային դարպասը. այդ ճանապարհով գալիս էին արևմտահայերը, Ջուլֆան ու Բաքուն՝ հարավայինը, որով անցնում էին պարսկահայերը:

<sup>12</sup> H. J a c k T o u r j a n t z. Search for Homeland. New York, 1987, p. 87.

կային և ինտեգրման այլ խնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտ էին նրանց ադապտացման գործընթացում:

Սովետական երկիրը չուներ ինտեգրման քաղաքականություն, և դրա կարիքն էլ չուներ, քանի որ երկիր մտած յուրաքանչյուր անձ, ում մանավանդ շնորհիվում էր սովետական քաղաքացիություն, պարտադրված էր վերափոխվել՝ իշխող գաղափարախոսությանը համապատասխան, հարմարվել ու փորձել սեփական ջանքերով տեղ գտնել տեղի հասարակության մեջ: Սովետական դեկավարությունն ուներ նորեկներին վերադաստիարակելու որոշակի ծրագիր, որն իրագործում էր հետևողականորեն: Այդ նպատակով կազմակերպվում էին քաղպարապմունքներ, հատուկ դասընթացներ՝ նորեկներին կոմունիստական ոգով դաստիարակելու և մարքսիզմ-լենինիզմի ուսմունքին ծանոթացնելու: Նորեկները, որոնց համար բարդ ու անհասկանալի էր թե՛ նյութը, թե՛ լեզուն (արևելահայերեն՝ ռուսերեն տերմիններով շաղախված), թե՛ նպատակը, աշխատում էին խուսափել պարապմունքներից: Նման դեպքերում նրանց նկատմամբ կիրառվում էին պատժամիջոցներ, որոնք համարվում էին դաստիարակիչ միջոցառումներ. ստիպողաբար էին բերում՝ սպառնալով զրկել աշխատավարձից կամ հեռացնել աշխատանքից:

Քաղպարապմունքներից զատ բացվում էին և երեկոյան դպրոցներ՝ անգրագետների ու հայերեն չիմացողների համար (այդպիսիք կային Սիրիայի, Իրաքի գյուղական բնակավայրերից), անցկացվում էին ռուսերենի և արևելահայերենի դասընթացներ, որոնք կարճատև կյանք ունեցան: Սրանով սահմանափակվում էր իշխանությունների հոգատարությունը նորեկների հանդեպ: Մնացած հարցերում ներգաղթածը մնացել էր մեն-մենակ ու անօգնական իր համար օտար, խորթ և անհասկանալի պայմաններում, նոր հասարակության մեջ իր տեղն ունենալու անգոր ջանքերով: Իսկ խորթն ու անծանոթը շատ էր: Ներգաղթած հայերը եկել էին սովետական կարգերին տրամագծորեն հակառակ քաղաքական համակարգ և տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներից: Նրանք որևէ պատկերացում չունեին սովետական երկրի գաղափարախոսության ու գոյություն ունեցող արժեքային համակարգի մասին: Նույնիսկ նրանք, ովքեր արտասահմանում համայնավարական էին, դարձյալ չգիտեին սովետական համայնավարության մասին: Մի ներգաղթած կոմունիստ ասում էր. «Մեր գիտցած կոմունիստը բոլորովին տարբեր է, ասոնց ըսած-ըրածը իրարու հետ չէ բռներ»<sup>13</sup>:

Տարբեր էին ներգաղթածների պատկերացումները սեփականության մասին: Արտասահմանում սեփական գործ, ձեռնարկություն, խանութ-սրճարան ունենալը խրախուսվում էր և բնութագրում էր անհատին՝ որպես ձեռներեց, գործարար մարդու: Խորհրդային երկրում մասնավոր գործունեությունը ոչ միայն արգելվում, այլև քրեորեն պատժվում էր՝ հակառակ արտասահմանում քարոզչության ժամանակ տրված հավաստիացումներին: Ներգաղթած արհեստավորները, հատկապես դերձակներն ու կոշկակարները, տներում մասնավոր պատվերներ էին ընդունում՝ շատ թե քիչ տանելի գոյություն ապահովելու նպատակով: Նրանց աշխատանքի մասին

<sup>13</sup> Մ. Բ ա զ ա ր յ ա ն. Նամակներ «սովետական դրախտից», Երևան, 1989, էջ 47:

գիտեին և հսկում էին շրջավետների ֆինբաժինները: «Ֆինբաժինին մարդը» նորեկ արհեստավորների ահն ու սարսափն էր, որն իրավասու էր ոչ միայն տուգանել, այլև աշխատանքի գործիքները առգրավել (նաև՝ խուզարկության արդյունքում հայտնաբերած հումքը, պատրաստի արտադրանքը): Ներգաղթածի համար միանգամայն անհասկանալի էր, թե ինչու մարդն իրավունք չունի իր արհեստով աշխատել ու հոգալ իր կարիքները և ինչպես կարող է մասնավոր աշխատանքը համարվել նույնքան պատժելի, որքան թերակշռումն ու գողությունը: Ֆինբաժնի հետապնդումից ու խուզարկություններից խուսափելու համար նորեկները սովորեցին կաշառք տալ, որը, ինչպես և «փափախ անել»-ը առաջին դասերն էին, որ սերտեցին ադապտացման գործընթացում:

Ինչպես ասվեց, ներգաղթածներից շատերն իրենց հետ բերել էին սարքավորումներ, հաստոցներ, մեքենաներ, որոնք իսկույն պետականացվում էին: Մնալով գործարանների բակերում՝ բերված թանկարժեք տեխնիկան փչանում էր, ինչը վրդովմունք էր առաջացնում հայրենադարձների մեջ, որոնք զրկված էին այդ մեքենաները գործարկելու իրավունքից: Նրանց դժգոհությունն իր հերթին որակավորվում էր որպես կապիտալիստական վնասակար մտածողության դրսևորում:

Ներգաղթածների համար նոր էր և աշխատանքի ու վարձատրման կարգը: Արտասահմանում աշխատողը ստանում էր շաբաթավարձ, Հայաստանում՝ ամսավարձ: Սակայն դա այնքան զարմանալի չէր թվում, որքան այն, որ ընտանիքի ամսական ծախսն ավելին էր, քան վաստակածը: «Արտասահման ասիկա չըլլալիք բան է, պատմում է բանասացը, եթե մարդը չաշխատեր, ընտանիքը չպահեր ծույլ է կրսեինք, բայց աշխատես և ընտանիքդ անոթի մնա, ասիկա չլսված բան է»<sup>14</sup>: Անսովոր էր նաև այն, որ հաճախ աշխատանքը կորցնելու վախից ստիպված էին լինում անվարձահատույց աշխատել ղեկավարի, բարձր պաշտոնյայի համար: Այստեղ նույնպես բերվում էր արտասահմանի հետ համեմատականը, երբ նման պարագայում վարձատրվում էին շոայլորեն:

Ներգաղթածները չէին կարողանում ըմբռնել աշխատավարձից պահվող անգավակության հարկի իմաստը, որը նրանց կարծիքով բռնություն էր մարդու ազատ կամքի վրա և կանանց մղում էր անբարոյականության: Անհասկանալի էր նաև եկամտահարկը:

Շարունակելով ծանոթանալ ու հարմարվել կյանքի նոր պայմաններին, նորեկներն իրենց համար բացահայտեցին սովետական իրականության մեջ այնքան տարածված «տակից վաճառելու» առևտրի ձևը, որն այդպես էլ չյուրացրին, և նրանցից շատերը դատապարտվեցին իրենց անփորձության ու միամտության պատճառով:

Երևանում գործող «սև շուկան» ևս անծանոթ էր հայրենադարձների համար: Նրանց պատկերացմամբ՝ դա ապօրինի, արգելված առևտուր էր, որը, սակայն, «օրինականացած» էր Հայաստանում: «Սև շուկայում» հայրենադարձները վաճառում էին իրենց հետ բերած իրերից (հագուստ, կոշիկ և այլն)՝ ընտանիքի սնունդը հոգալու

<sup>14</sup> ԴԱՆ, Երևան, 1973, բանասաց՝ հունահայ Կոզայան Կարապետ (ներգաղթած 1946 թ.):

համար: «Սև շուկան» ոչ միայն առևտրի, նաև հանդիպման վայր էր, որտեղ ներգաղթածները կարող էին տեսակցել, նորություններ ու լուրեր փոխանակել և իրենց ցավերից խոսել: Նմանօրինակ մի վայր էր նաև Երևանում Ներգաղթ կոմիտեի շենքի դիմացի այգին (ներկայումս Շահումյանի արձանի հարևանությամբ), որը հայրենադարձներն անվանում էին «լացին պարտեզ»: Տարբեր հարցերով Ներգաղթ կոմիտեի կողմից հայրենադարձներն այստեղ հանդիպում էին, իրար ցավ կիսում, պատմում իրենց դժվարություններից: «Որքան ցավ ու հառաչ, որքան լաց ու արցունք տեսած են այս թուփերը»<sup>15</sup>, – պատմում է բանասացը:

Ներգաղթածներն ստիպված էին հարմարվել և հոգևոր արժեքների փոփոխություններին կամ դրանց բացակայությանը: Նրանք տեղում համոզվեցին, որ կրոնն ու եկեղեցին, ինչպես նաև ժողովրդական տոներն ու ծեսերը ոչ միայն անտեսված, այլև արգելված են սովետական երկրում: Ջարմանում էին, թե ինչպես կարելի է առանց եկեղեցու ամուսնանալ, առանց քահանայի հանգուցյալին հուղարկավորել կամ երեխային չմկրտել: Նրանք աստիճանաբար սովորեցին քրիստոնեական արարողությունները ծպտված՝ տան պատերի ներսում անել և աղոթքն էլ շշուկով արտասանել, քանի որ «պատերն անգամ ականջ ունին»: Շատերն իրենց հետ սրբապատկերներ էին բերել, սակայն վախենում էին կախել պատերից՝ հասկանալով, որ կրոնական երկյուղածությունն ու պաշտամունքը չի քաջալերվում սովետական երկրում:

Ներգաղթածների հոգևոր արժեքներում կարևոր տեղ ունեւր ցեղասպանության հիշողությունը, որի մասին արգելված էր խոսել Հայաստանում: Այն դեպքում, երբ արտասահմանում ամեն մի մանկիկ զիտեր եղեռնի մասին և իր մեծ մայրերի ու հայրերի ծննդավայրերի անունները, Սովետական Հայաստանում սերունդ էր աճում՝ անտեղյակ իր ժողովրդի պատմության եղբրական իրադարձություններից:

Այս մթնոլորտում ներգաղթածները, որոնք դեռևս մնում էին «անկողմնային», ոչ մի կերպ չէին կարողանում լծվել սովետական գաղափարախոսության կառքին, ձուլվել տեղական մշակույթին<sup>16</sup>:

Ներգաղթածների և տեղացիների համակեցությունն ու փոխմերձեցումն ընթանում էր կենցաղային շփումներով, որի ընթացքում ձևավորվում էր փոխընկալման մեխանիզմը: Այդ ընկալումներում կարևոր տեղ ունեւր արևմտահայերեն-արևելահայերեն խոսակցականը<sup>17</sup>: Լեզվական փոխմերձեցումներում ամենաբնորոշը, սակայն, «ախպար» բառի երկատված ընկալումն էր, որը, ինչպես հայտնի է, գրական «եղբայր» բառի արևմտահայ բարբառային տարբերակն է, ինչպես «ախպեր»-ը՝ արևելահայերենում: Եթե արևմտահայերը «ախպար» բառն օգտագործում էին հարազատ-բարեկամին դիմելիս, ապա տեղացիներն այն կրկնում էին հեզնական շեշտադրությամբ՝ նկատի ունենալով հենց եկվորներին, ինչը վիրավորական էր նկատվում վերջիններ-

<sup>15</sup> ԴԱՆ, Երևան, 1972, բանասաց՝ ֆրանսահայ Մարտիկյան Թորգոմ (ներգաղթած 1947 թ.):

<sup>16</sup> Մ. Բ ա գ ա ր յ ա ն ն. նշվ. աշխ., էջ 32:

<sup>17</sup> Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն. Հայրենադարձների ու տեղացիների փոխընկալման լեզվական դրսևորումները. – Հայ ժողովրդական մշակույթ, XI, Երևան, 2004, էջ 147-153:

րիս կողմից: Կարևոր է նշել, որ սկզբնական շրջանում ներգաղթածներին անվանում էին «նորեկ» կամ «նորեկող»՝ ի տարբերություն նախորդ փուլերի ներգաղթածների, որոնց անվանեցին «հին էկող»: «Ախպար» բառը տարածում գտավ 1948 թ.՝ սկզբնապես Երևանում, ավելի ուշ՝ ներգաղթածներով բնակեցված Հայաստանի այլ վայրերում: Կարճ ժամանակ անց կիրառության մեջ մտավ բառի հոգնակի ձևը՝ «ախպարներ», այս պարագայում ձևերը բերելով մենք – դուք անջրպետող նշանակություն, վերածվելով ինքնատիպ սուբեթնոնիմի<sup>18</sup>, ձևավորվեց ներգաղթածների ներէթնիկ խումբը<sup>19</sup>:

Ի դեպ, 1946–1948 թթ. ներգաղթողների կազմում զգալի տոկոս կազմող (20 հազար) իրանահայերը<sup>20</sup>, չնայած իրենց մեծ թվաքանակին, սկզբնապես վրիպել էին տեղացիների ուշադրությունից, քանի որ հիմնականում ծագումով արևելահայ էին (բացառությամբ արևմտահայերի փոքրաթիվ խմբերի): Չնայած այդ հանգամանքին, նրանք ունեին ադապտացման ու ինտեգրման իրենց ուրույն խնդիրները, քանի որ օտարված էին թե՛ տեղացիներից՝ որպես դրսից եկածներ, և թե՛ բախտակից արևմտահայերից, որոնք նրանց չէին դիտում որպես սփյուռքահայերի: Տեղացիները նրանց առանձին դեպքերում անվանում էին «պարսկաստանցի» կամ «պարսիկ»<sup>21</sup>, որը նույնքան վիրավորական էր վերջիններիս համար, որքան «ախպար»-ը՝ արևմտահայերի: Ավելի ուշ իրանահայերը նույնպես անվանվեցին «ախպարներ», որն այս դեպքում արդեն ձևերը բերեց առավել ընդհանրացնող նշանակություն, այն է՝ ոչ տեղացի, դրսից եկած հայ:

Կենցաղային հարթություն փոխադրված տեղացի – նորեկ փոխադարձ անհանդուրժողականությունն իր անդրադարձն ունեցավ և ամուսնական կապերի վրա: Եր-

<sup>18</sup> Կարևոր է նշել, որ էթնոսի ներսում սուբեթնիկական խմբերի և նրանց մշակույթի ընկալումը, «մենք-դուք» տարբերակմամբ, դիտարկելի է առհասարակ եկվոր տարրի նկատմամբ: Բավական է թվարկել սուբեթնոնիմի կարգավիճակ ձևերը բերած այնպիսի անվանումներ, ինչպես «կող», «գլավա», «թաժախայ» և այլն (այս հարցի մասին մանրամասն տե՛ս Հ. Մ ա ղ ո յ ա ն. Վարդենիսի շրջանի հայության ներէթնիկ շերտերը. փոխհարաբերության հարցեր.– Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում, 1, Հանրապետական գիտական նստաշրջան, Երևան, 1997, էջ 18-20):

<sup>19</sup> Տեղի հասարակության կողմից եկվորին ջրնդունելու, մերժելու միտումը կրկնվեց 1990-ականներին՝ Ադրբեջանից Հայաստան գաղթած հայության նկատմամբ, որոնք նույնպես օտարվեցին «մենք-դուք» տարբերակմամբ և համապատասխան սուբեթնոնիմով՝ «փախստական», «թուրք» (այս հարցի մասին տե՛ս Հ. Խ ա ղ ո յ ա ն. Մենք և նրանք, հասարակությունը և փախստականները.– Հայֆրանսիական պատմամշակութային առնչություններ, Երևան, 2000):

<sup>20</sup> Տե՛ս Ա. Մ տ է փ ա ն յ ա ն. Իրանահայերի ներգաղթը 1946-1948 թթ.– Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երևան, 2007, էջ 282-287:

<sup>21</sup> Այսօր էլ Հայաստանում ներգաղթած իրանահայերին հաճախ անվանում են «պարսիկ», որը վիրավորական է ընկալվում վերջիններիս կողմից: Այս փաստը արձանագրեցինք և վերջերս Իրան կատարած ուղևորության ընթացքում: Հայաստան գնացած-եկած շատ իրանահայեր դժգոհում էին, որ իրենց տեղացիները «պարսիկ» են անվանել, այդ պատճառով էլ չեն ուզում մշտապես բնակվել Հայաստանում: Հարկ է նշել, XX դ. սկզբին գաղթական արևմտահայերը, հատկապես սասունցիները, «պարսիկ» անվանումը տալիս էին ողջ Արարատյան դաշտի բնակչությանը՝ նկատի առնելով, հավանաբար, վերջիններիս պարսկական լծի տակ գտնվելու երկարատև ժամանակաշրջանը: Ներգաղթող պարսկահայերին տրվող «պարսիկ» անվանումը համեմատաբար նոր ժամանակների ընկալում է, որը մենք առաջին անգամ արձանագրեցինք 1970 թ. Սպիտակի շրջանում:



կու կողմից երբեմն հնչում էր նույն կարգախոսը՝ «Մենք տեղացիին աղջիկ չենք տար, չենք ուզեր», «Մենք ախպարին աղջիկ տվողը չենք ու չենք ուզի»: Խառնամուսնություններ, անշուշտ, տեղի էին ունենում, իսկ ընտանեկան վեճերի պարագաներում, հարսի թերացումը կամ դժգոհությունը նրա հանդեպ վերագրվում էր վերջինիս «ախպարական» կամ «տեղացի» ծագմանը<sup>22</sup>:

Ներգաղթածների և տեղացիների միջև անջրպետի խորացմանը նպաստեց 1948 թ. վերջերից սկսած ընդհանուր անհանդուրժողականության մթնոլորտը. ներգաղթածները համարվում էին «անվստահելի»՝ բառի լայն առումով, դրանից բխող բոլոր հետևանքներով: Սա սովետական երկրի պետական ներքին քաղաքականությունն էր, որը հետո տվեց իր դառը պտուղները: Ներգաղթածին չէին վստահում բարձր պաշտոն, ղեկավար դիրք, պատասխանատու աշխատանք: Ղեկավար մարմինները, ուժային կառույցները պարզապես տարուացված էին նրանց համար, ինչը պահպանվեց մինչև խորհրդային իշխանության վերջին տարիները:

Պետական անվստահությունն ու տեղացիների օտարոտի վերաբերմունքը, ի վերջո, փոփոխություններ առաջացրեց ներգաղթողների էթնիկական ինքնության մեջ՝ ձևավորելով սուբէթնիկական ինքնության գիտակցում՝ օտար յուրայինների մեջ, հայ, բայց ոչ հայաստանցի, գոնե առնվազն՝ ոչ նման տեղացի հային: Այս առթիվ Ամերիկա արտագաղթածները պատմում են, թե «երեսուն տարի Հայաստանում պայքարեցինք հայաստանցի դառնալու համար, բայց ախպար մնացինք, հիմա եկանք Ամերիկա, այստեղ մեզ հայաստանցի են ասում»<sup>23</sup>: Սա «նոր» Սփյուռքի օտարումն էր «հին» Սփյուռքից:

Ներգաղթածներից շատերը նշում էին, որ սոցիալական դժվարությունները սկզբնական շրջանում, թերևս, հաղթահարելի էին, սակայն առավել դժվար էր ընտելանալ օտարացմանը, անվստահությանը, թերագնահատմանը և ներգաղթածի ու տեղացու նկատմամբ եղած տարբերակված մոտեցմանը:

Վիճակն էլ ավելի բարդացավ, երբ սովետական ողջ երկրում վերսկսվեցին քաղաքական հալածանքներն ու արտորը (1949 թ.): Դրանից չկարողացան խուսափել և ներգաղթածները<sup>24</sup>: Նրանց արտորը հիմնավորելու համար լուրեր էին տարածվում, թերթերում նյութեր էին տպագրվում «ախպարների կազմակերպած սաբոտաժների», Երևանի խմելու ջրի թունավորման և այլ «չարագործությունների» մասին: Նրանց ազատում էին աշխատանքից առանց որևէ հիմնավորման կամ ազատելու սպառնալիքի տակ ստիպում վկայություն տալ այս կամ այն ներգաղթածի հակասովետական գործունեության մասին: Նրանք մեղադրվում էին արտասահմանի ազգականների

<sup>22</sup> Այս հարցի մասին մանրամասն տես՝ Ա. Մ տ ե փ ա ն յ ա ն. Հայրենադարձների ենթաէթնիկ ինքնագիտակցության դրսևորումներն ամուսնական կապերում. – Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, հանրապետական գիտական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2001, էջ 92-94:

<sup>23</sup> ԴԱՆ, Երևան, 1987, բանասաց՝ սիրիահայ Մալքյան Գևորգ (ներգաղթած 1946 թ., 1972-ին արտագաղթել է ԱՄՆ):

<sup>24</sup> Ա. Մ ա ն ու կ յ ա ն. Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999, էջ 220-222, 228: Ա. Վ ի Ր ա բ Յ ա ն. 1949 թ. զանգվածային բռնազաղթածները Հայաստանում. – «Երեկոյան Երևան», 20. VI. 1988:

հետ ունեցած կապերում, ինչը որակավորվում էր լրտեսական գործունեություն: Այս ամենը աստիճանաբար ձևավորեց երկրից հեռանալու տրամադրություններ, և շուտով արտասանվում էր՝ երթալը կփրկե:

Ներգաղթն ընդհատվեց անսպասելիորեն, և հազարավորները, որոնք տուն-ունեցվածք ծախսած, գործերը լուծարած, շատերը նույնիսկ քաղաքացիությունից հրաժարված նավահանգիստներում սպասում էին իրենց տանող շոգենավերին, այդպես էլ մնացին տունդարձի ճանապարհին: Նախապես ոչ մի զգուշացում չէր եղել ներգաղթն ընդհատելու մասին, և դա բոլորի համար անսպասելի էր: Նրանք չէին կարող կարճ ժամանակում ետ բերել կորցրածը, հատկապես՝ պետության վստահությունը: Այդ մարդկանց մասին հոգ տարավ Հայ բարեգործական ընդհանուր միությունը: Ընտանիքներ կիսվեցին, ճակատագրեր խեղվեցին, և նորից իջավ երկաթե վարագույրը: Երկու կողմում էլ չգիտեին, թե ինչ եղավ իրենց հարազատների հետ: Սփյուռքի մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց այս առթիվ, բայց մնաց «ձայն բարբառոյ յանապատի»:

Քաղաքական հալածանքների ու արտոյի տարիները լուրջ խեղումներ առաջացրին «հայրենիք» հասկացության ընկալման մեջ: Շատերն էին մտորում՝ արդյոք սա՞ էր իրենց երազած հայրենիքը, թե՞ այն, որ թողեցին, որտեղ յուրային էին օտարների մեջ, իսկ այստեղ՝ հայրենիքում, օտար՝ յուրայինների մեջ: Այս մտորումները հիմնական պատճառներից մեկը եղան 1970-ականների արտագաղթի, որի առաջնեկները հենց իրենք՝ նախկին հայրենադարձներն էին: Այդ ժամանակ հայրենադարձների մեջ կենսունակ էր «Ճիշտը երթալն է» կարգախոսը: Տեղին է հիշել այդ իրողությունը ներկայացնող հայտնի մի գվարձախոսություն. երբ Ամերիկա մեկնող մի հայրենադարձի հարցնում են, թե ինչու է գնում, արդյոք այնտեղ բարեկամ-ազգակա՞ն ունի, վերջինս պատասխանում է՝ «49-ին Սիբիրիա դրկեցիր նե, հոն ազգական-բարեկա՞մ ունեի»:

Պետք է նկատել, որ ներգաղթը սոսկ վերաբնակեցում չէր, այլ կենսաձևի, պատկերացումների, մտածելակերպի կտրուկ փոփոխություն, որը բերում էր արժեքային ողջ համակարգի վերանայում: Ո՛չ Սփյուռքում և ո՛չ էլ Հայաստանում հայության այս երկու հատվածները, կտրված լինելով իրարից, բաժանված երկաթե վարագույրով, չէին ճանաչում իրար և գրեթե անիրազեկ էին դրսում ու ներսում տեղի ունեցող փոփոխություններին, հետևաբար և պատրաստ չէին այս հանդիպմանը: Դրան չէին նպաստում երկրի քաղաքական ու տնտեսական պայմաններն առավել ևս հետպատերազմյան շրջանում: Այս առումով, ներգաղթն անժամանակ էր և ներգաղթի կազմակերպումը չէր բխում ո՛չ Սփյուռքի և ո՛չ Հայաստանի հայության շահերից:

Եվ այնուամենայնիվ, 1946–48 թթ. հայրենադարձությունը որոշակի դեր խաղաց Հայաստանի տնտեսության զարգացման մեջ ու մշակութային կյանքում: Հայրենադարձության արդյունքում Հայաստանը ձեռք բերեց բարձր որակավորում ունեցող բազմապրոֆիլ բանվորներ ու արհեստավորներ: Իզուր չէր, որ ներգաղթած արհեստավորն ինքն իր մասին ասում էր՝ «ամեն բանին վարպետը հոս է»: Առողջապահության բնագավառը ձեռք բերեց նեղ մասնագիտացման բժիշկներ, օտար լեզուների

*մասնագետներ, որոնց կարիքը կար դպրոցներում և բուհերում: Հայաստան ներգաղթած մշակույթի գործիչների շնորհիվ (Գրիգոր Ահարոնյան, Հարություն և Արմինե Կալենց, Հրայր Ներսիսյան, Վահրամ Փափազյան, Արման Կոտիկյան, Վարդուհի Վարդերեսյան, Գոհար Գասպարյան և այլք) նկատելիորեն աշխուժացավ հանրապետության մշակութային կյանքը<sup>25</sup>:*

## АРМЯНСКИЙ ОПЫТ РЕПАТРИАЦИИ (1946–1948 гг.)

*АРМЕНИИ СТЕПАНЯН*

### Р е з ю м е

Третий этап репатриации армян в XX в. включает 1946–1948 гг. За эти годы из пятнадцати стран мира около 100 тыс. армян иммигрировали в Советскую Армению. Это была самая массовая, по сравнению с предыдущими, репатриация, которая вошла в армянскую историографию как «Великая репатриация». Высокий международный рейтинг советской страны-победительницы, предъявленные советским правительством территориальные претензии к Турции, а также призыв Советской Армении, обращенный к диаспоре, послужили предпосылками и стимулом репатриации. После прибытия на родину перед репатриантами встал вопрос интегрирования и адаптации в принимающей среде. Слишком значительная социокультурная дистанция между странами исходной среды зарубежных армян и их новым местом проживания, сложности к адаптации и новым чуждым условиям – с одной стороны, экономические трудности послевоенных лет, нерешенные социальные проблемы – с другой, усложнили процесс интегрирования и адаптации репатриантов. Помимо этого, они столкнулись и с непониманием и нетерпимостью принимающего общества, а также с дискриминацией, что привело к формированию двух «субэтнических» групп – местных и новоприбывших, получивших пейоративный (оскорбительный) субэтноним «ахпар», к нарушению целостности этнической идентичности. Возобновившиеся сталинские репрессии (1949 г.), жертвами которых стали и сотни репатриантов, так и не успевшие адаптироваться, привели к окончательному искажению понятия родины и стали причиной обратного процесса – эмиграции самих репатриантов.

<sup>25</sup> Տե՛ս Ա. Մ տ է փ ա ն ն ի ն. Մեծ հայրենադարձության դերը Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքում. – «Բնօրրան» (Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի հանդես), 2004–2007, թիվ 1–4, էջ 82–85:

---

ARMENIAN EXPERIENCE OF REPATRIATION  
(1946–1948)

*ARMENUHI STEPANYAN*

S u m m a r y

The third stage of Armenian repatriation in the 20th c. includes the 1946s–1948s. At that period about 100 thousands of Armenians immigrated to Soviet Armenia from fifteen countries of the world. It was the most mass repatriation in comparison with the previous ones, named "Great Repatriation" in Armenian historiography. The high international rating of the Soviet Union and the territorial pretensions claiming to Turkey by the Soviet government, as well as the call of Soviet Armenia, were the preconditions and the stimuli for the repatriation. After arriving to the Homeland, repatriates had many problems with integration and adaptation in the receiving society. The great social and cultural distance between the Hostland and Homeland, different political systems and the Soviet ideology on one side and the post-war economical and social unsettled problems on the other side, complicated the process of adaptation. Except that, repatriates came across with incomprehension and intolerance from the locals. That is why there were finally formed two subethnic groups – locals and newcomers, with corresponding perceptions of "ours" and "foreigners". Those are the motives and course of transformations in the ethnic identity of the repatriates. At the period of the beginning of stalinian repression by the Soviet country, hundreds of repatriates were repressed too and deported to Siberia. It finally distorted the idea of Homeland and led to their backward emigration to the Diaspora.